Հաշվետվությունը հաստատում եմ
գերազանց:
[signature] Ն. Նազարյան
22.05.2024 թ.

Փորձաքննության և վերլուծությունների
վարչության գիտական փորձաքննության
բաժնի պետ Նաիրա Նազարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի փորձագետի կողմից 22.03.2024 թ. – 21.05.2024 թ. ժամանակահատվածում իրականացվել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի գործառույթներից բխող հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 19.02.2024 թ. N 242-Ա/2 և 05.03.2024 թ. N 308-Ա/2 հրամանների համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվում են «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024/2»» և «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024/2» մրցույթները: Մրցույթների շրջանակներում հայտ ներկայացնողներին տրամադրվում է տեղեկատվական խորհրդատվություն, Մրցույթներին առցանց դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի հունիսի 14-ն է:

2. 15.04.2024 թ. և 23.04.2024 թ. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեում կազմակերպվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.03.2024 թ. N 370-Ա/2 հրամանով ձևավորված «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» մրցույթին ներկայացված հայտերի և հաշվետվությունների գնահատման նպատակով մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստերը, մրցույթին ներկայացված հայտերը քննարկելու և գիտական փորձաքննությունը կազմակերպելու նպատակով: Նախապատրաստվել և խորհրդի անդամներին են տրամադրվել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները: Ներկայումս իրականացվում են գիտական փորձաքննության հերթական փուլերի կազմակերպման աշխատանքները:

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերպվել են «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2024», «Մասնագիտական

վերապատրաստում 2024/2» մրցույթները և «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» միջազգային մրցույթը: Մրցույթներին մասնակցելու հայտ ներկայացվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգով (https://grants.hesc.am, այսուհետ՝ Համակարգ): Հայտերի առցանց ընդունումը պատշաճ ապահովելու նպատակով, տեխնիկական հարցերի առկայության դեպքում, հայտ ներկայացնողներին տրամադրվում է աջակցություն՝ առաջացած խնդիրները կարգավորելու համար:

4. 2024 թվականի մայիսի 17-ին ավարտվել է «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին առցանց դիմելու վերջնաժամկետը: Մրցույթին առցանց ներկայացվել է 223 հայտ, նախագծերը մշակել և ներկայացվել են 3-5 անդամից բաղկացած գիտահետազոտական խմբերը: Համակարգում գրանցվելիս որոշակի դժվարություններ ունեցող անձանց տրվել են համապատասխան ցուցումներ, կարգավորվել են առաջացած տեխնիկական խնդիրները:

5. Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու և գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթներին մասնակցելու հայտ ներկայացվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի https://orgs.hesc.am/ համակարգով: Մրցույթներին մասնակցելու հայտ ներկայացնողներին տրամադրվում է խորհրդատվություն տեխնիկական հարցերով: Մրցույթներին առցանց դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի հունիսի 14-ն է:

6. Իրականացվել են աշխատանքներ գիտական փորձաքննության գործընթացում օտարերկրյա փորձագետներ ներգրավելու նպատակով: Ծանուցումները և տեղեկատվության փոխանակումը կատարվել է էլեկտրոնային եղանակով:

Փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի փորձագետ		Մարինա Տիմոտինա 22.05.2024 թ.